



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

551
F-19

4944

2010

884a
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 75

530
8-FK

551
F-19

ՍԱՄՈՒԵԼ ԲՈԼԱԴԵԱՆ

ԶՐՈՅՑՆԵՐ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

1000
974



Թ. Ի. Ֆ. Ա.
Տպար. Վ. բաց Հրատ. Ընկ. | Տիպ. Հրատ. Իզդ. Տ-վա.
1893

2002

Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն.

Այս գրքոյկի նիւթը կազմում է երկրա-
գործութեան ամենակարևոր հարցերից մէկը:
Երկրագործին ամենից առաջ անհրաժեշտ է
լաւ բմբոնել իր հողի յատկութիւնները, որոն-
ցից ըստ մեծի մասին կախուած է լինում
գործի աջողութիւնը կամ անաջողութիւնը:

Որովհետեւ գրքոյկիս մէջ յարուցուած հար-
ցերը կապ ունին բոլորի կեանքի մի քանի
երեսութների հետ, ուստի բարւօք համարեցի
առաջին գլուխը նուիրել այդ երեսութներին:

Ա. Բ.

Дозволено ценз. Тифлисъ, 24 Июня 1893 г.

30/61- Ա. Բ.

13319- 58

二

Բոյսերի սնունդը: Բոյսերը կերակրում են ար-
մատների ու տերեների օգնութեամբ: Կարեռ
հաճքային նիվթերը: Բոյսերի չնչառումը:

Հազիւ թէ կարիք լինի ապացուցանել, որ
բոլմերը կենդանի էակներ են. կենդանիների
նման՝ բոյսերն էլ ծնւում են, գարգանում են
և՝ հասնելով ծերութեան՝ մեռնում են: Ուրեմն
նրանք նոլնպէս ունին իրանց մանկութեան,
պատանեկութեան և ծերութեան հասակը:

Սլդ Հիման վրա լիովին իրաւունքով կարող ենք ասել բոյսերի մասին, որ նրանք ապրում են: Միւս կենդանի օրգանիսմների նման՝ բոյսերն ընդունում են կերակուր իրանց կեանքը պահպանելու համար: Այս հանգամանքը բոլորին յայտնի է: Վէճի առիթ էր տալիս գիտնականների շրջանում միայն այն հարցը, թէ ինչպիսի նիւթերից է կազմում բոյսերի սնունդը: Մի քանիսներն ասում էին,

որ բոլսերի համար անհրաժեշտ է այս կամ այն նիւթը, միւս գիտնականները պնդում էին, որ բոլսերը կերակրում են ուրիշ նիւթերով:

Կային մինչև անդամ այնպիսիները, որոնք հաւատացնում էին, որ բոլսերը կերակրում են հասարակ ջրով: Ուրեմն այդ մարդկանց կարծիքով հասարակ ջրից արտադրում են այն բազմաթիւ բարդ նիւթերը, որոնցից կազմուած են բոլսերը: Դրանց ասելով՝ բոլսերը ջրից կազմում են իրանց արմատները, ճիւղերը. հասարակ ջրից գոյանում են ծառերի կոսները, ծաղիկները, պտուղները....

Զը պէտք է կարծել, որ այդ միաքը յայտնողները որևէ անուս մարդիկ էին: Զէ, յայտնի գիտնականներն էին պաշտպանում այդ միաքը, մատնանիշ լինելով իրանց արած փորձերի վրայ:

Ա.Հա այդ փորձերից մէկը.

Ֆրանսիայի ուսումնական Դիւհամէլին յաջողուեց զարգացնել մի քանի բոլսեր՝ ընկղութով նրանց արմատները ջրի մէջ: Դիւհամէլի ասելով բոլսերը գեղեցիկ կերպով զարգացան և մինչև անդամ նրանց վրայ ծաղիկներ գոյացան: Այս հանգամանքը բոլորովին համոզեց

Դիւհամէլին, որ բոլսերը կարող են իրանց օրդանները կազմել ջրից:

Ճիշտ էին արդեօք Դիւհամէլի արած դատողութիւնները: Մտաբերէք, որ այն հեղուկը, որ մենք ջուր ենք անուանում առօրեայ կեանքում, իստակ հասարակ ջուր չէ. նրա մէջ կան զանազան հանքալին նիւթեր լուծուած դրութեան մէջ: Այս բանում համոզուելու համար բաւական է վերցնել ջուր ու եփտակ մի որևէ ամանի մէջ: Իստակ ջուրը գոլորշիանալով կանչետանալ, իսկ ամանի մէջ կը մնայ փոքր քանակութեամբ սպիտակ փոշի: Այս այդ փոշին բաղկացած է հանքալին նիւթերից:

Նոյն նիւթերն են, որ ծածկում են ինքնաեռի ներքին մասերը. եթէ մեր գործածած ջուրը բոլորովին իստակ լինէր, երբէք ինքնաեռում չէին գոյանալ այնպիսի կեղևներ:

Ուրեմն Դիւհամէլի սխալը նրանում էր կայանում, որ նա՝ վերցնելով իր փորձերի համար հասարակ ջուր, կարծում էր, թէ այդ ջուրը իստակ է և իր մէջ ոչ մի կողմնակի նիւթ չի պարունակում:

Շատ փորձերով ուսումնականները ապացուցեցին, որ Դիւհամէլի վերցրած բոլսերը կերակրում էին ոչ միայն ջրով, այլ և այն

Հանքային նիւթերով, որոնք գտնւում էին նրա մէջ: Եւ ճշմարիտ եթէ վերցնենք բոլորովին խստակ ջուր, որից հեռացրած են հանքային և ուրիշ նիւթերը (այդպիսի ջուրը անուանում են թորած ջուր—дистиллированная вода) և ընկղմենք այդ ջրի մէջ բոյսերի արմատները, մի քանի օրից յետոյ բոյսերը կը մեռնեն:

Ուրեմն բոյսերի զարգացման համար հասարակ ջուրը բաւական չէ, ուրիշ նիւթեր էլ հարկաւոր են:

Մենք արդէն վերև տեսանք, որ բոյսերն ընդունում են բացի ջրից նաև հանքային նիւթեր: Բայց հանքային նիւթեր շատ կան: Արդեօք ամեն մի հանքային նիւթ ընդունակ է նպաստել բոյսերի զարգացմանը, թէ ընդհակառակը միայն մի քանի որոշ նիւթեր կարող են ծառայել իբրև սնունդ բոյսերին:

Այս հարցը վճռելու համար շատ գիտնականներ աշխատեցին, շատ փորձեր արին: Բարեբախտաբար նրանց աշխատանքը ապարդիւն չանցաւ. նրանց աջողուեց վերջ ի վերջով պարզել բոյսերի կերակրութելու հարցը: Ասում եմ, բարեբախտաբար, որովհետեւ այդ հարցը ահագին նշանակութիւն ունի, նրա վճռելը մեծ օգուտներ հասցրեց երկրագործութեանը:

Ուստի աւելորդ չի լինիլ մի փոքր ընդարձակօրէն խօսել այդ մասին:

Գիանականները՝ ցանկանալով հետազօտել վերոյիշեալ հարցին վերաբերեալ երևոյթները, վերցնում էին մի շարք անօթներ և լցնելով նրանց բոլորովին խստակ, թորած ջրով, ընկըզմում էին նրանց մէջ բոյսերի արմատները: Յետոյ սկսում էին աւելացնել ջրին զանազան հանքային՝ ծծմբալին, ֆոսֆորալին, բորակային (ազոտալին), կալիոնային և ուրիշ նիւթեր: Այսինքն այնպիսի նիւթեր, որոնք պարունակում են իրանց մէջ ծծումբ, ֆոսֆոր, բորակ, կալիոն:...

Թէ ինչ բան է ծծումբը, այդ ամենքն է դիտեն, իսկ ֆոսֆորը, բորակը և կալիոնը այնքան հանրածանօթ չը լինելով՝ աւելորդ չի լինիլ մի քանի խօսք ասել նրանց մասին:

Ֆոսֆորը յաճախ անուանում է լուսածին ու այդ վերջին անունից երևում է, որ ֆոսֆորն ընդունակ է լոյս տալ. դրանով է բացատրում, որ ֆոսֆորալին լուցկիները լոյս են տալիս մութ տեղերում: Նատ նիւթեր՝ ինչպէս ոսկորը, հացը, գինին՝ պարունակում են իրանց մէջ փոքր քանակութեամբ ֆոսֆոր:

Օդի ամենամեծ մասը բաղկացած է բորակից (ազոտից): Մեր շնչառութեան ժամանակ

բորակը օդի միւս մասերի հետ մտնում է թռքերի մէջ և յետոյ տրտաշնչում անփոփոխ կերպով, այնպէս որ շնչառութեան համար մեծ նշանակութիւն չունի: Կենդանիների աղբը, բոյսերի մարմինը և շատ ուրիշ նիւթեր հարուստ են բորակով:

Ինչ վերաբերում է կալիօնին, դա մի տարօրինակ մետալ է, որ իր տեսքով մի փոքր նման է պանրին: Վերջինի նման կալիօնը հեշտութեամբ կտրում է դանակով: Մեծ է կալիօն պարունակող նիւթերի թիւը. մոխրի, կենդանիների աղբի, շատ քարերի մի մասը բաղկացած է կալիօնից:

Այդպէս ուրեմն՝ ինչպէս վերև ասեցի գիտնականները վերցնում էին իստակ, թորած ջրով լցրած անօթները և աւելացնում զանազան հանքալին նիւթեր: Առաջ ամեն մի անօթի ջրում լուծում էին մի մի հանքալին նիւթ, և յետոյ ընկղմում ջրի մէջ բոյսերի արմատները: Սակայն տեսնելով, որ բոյսերը չեն կարողանում զարդանալ այդ դէպքում, ոկտում էին լուծել ամեն մի անօթում երկու, երեք կամ ել աւելի հանքալին նիւթեր: Օրինակ մի անօթի ջրին աւելացնում էին ազոտալին ու ֆոսֆորալին նիւթեր, միւս անօթում լուծում էին ֆոսֆորալին, կալիօնալին

և ազոտալին նիւթեր. Երբորդում — կրալին, կաղիօնալին, ֆոսֆորալին և երկաթալին նիւթեր, ևալին:

Այդ տեսակ փորձեր արին մեծ քանակութեամբ: Աւելացնելով ջրին այս կամ այն նիւթերը՝ դիտում էին, թէ ինչպէս են զարգանում բոյսերը:

Բանից դուրս եկաւ, որ ամենից լաւ աղդում են բոյսերի զարգացման վրայ ազոտալին, ֆոսֆորալին, կալիօնալին և մասամբ կրալին նիւթերը: Բոյսերը գեղեցիկ կերպով զարգանում են այն ջրում, որի մէջ լուծուած են այդ նիւթերը, իսկ առանց նրանց ամենևին չի կատարում բոյսերի զարգացումը: Մինչև անգամ եթէ այդ նիւթերից մէկը պակաս լինի, բոյսերը չեն մեծանալ:

Պարզ է, որ այդ նիւթերը անհրաժեշտ են բոյսերի զարգացման համար. նրանցով են կերակրում բոյսերը: Միւս կողմից այն հանքալին նիւթերը, որոնց մէջ չը կայ ոչ ֆոսֆոր, ոչ ազոտ, ոչ կալիօն կամ կիր, անկարող են ծառալել իբրև սննդական նիւթ բոյսերի համար: Օրինակ պղնձալին, արծիճալին, կաւալին նիւթերը բոլորովին անպէտք են բոյսերի համար:

Եթէ ճիշտ է, որ վերոլիշետ նիւթերն են

կազմում բոյսերի սնունդը, եթէ առանց նրանց բոյսերը չեն կարող զարգանալ, ուրեմն հողի մէջ էլ՝ ուր կայ բուսականութիւն, պէտք է լինին նոյն նիւթերը: Եւ յիրաւի՛ փորձերը ցոյց տուին, որ բոյսերը չեն կարողանում ապրել այն հողում, որի մէջ չը կան վերոյիշեալ սննդական նիւթերը:

Ի՞նչ ասել կուզի, որ ամենակարևոր սննդական նիւթերի թուին պատկանում է և ջուրը: Բոյսերի զարդացման համար անհրաժեշտ է ջրի մեծ քանակութիւն: Զարմանալի չէ ուրեմն, որ առաջ գիտնականները համարում էին ջուրը միակ սննդական նիւթ բոյսերի համար:

Ուրեմն ազոտալին, կալիօնալին, ֆոսֆորալին նիւթերը և ջուրը կազմում են գլխաւորապէս բոյսերի սնունդը: Ջուրը՝ թափանցելով հողի մէջ՝ լուծում է գլխաւոր սննդական նիւթերը, իսկ բոյսերի արմատները՝ ծրծելով այդ ջուրը՝ ստանում են վերջինի մէջ լուծուած հանքալին նիւթերը: Այդպիսով ջուրը կրկնակի օգուտ է տալիս. նա համ ինքն է ծառայում իբրև սննդական նիւթ, համ էլ նրա միջոցով միւս կարեւոր նիւթերը թափանցում են բոյսերի արմատների մէջ:

Սակայն շտապում եմ աւելացնել, որ վե-

րե թուած նիւթերով չեն բաւականանում բոյսերը. սրանց համար մի նիւթ ևս անհրաժեշտ է—այն է ածխաթթուատը: Միայն այս վերջինը թափանցում է բոյսերի մարմնի մէջ ոչ թէ արմատների այլ տերևների օգնութեամբ. տերևները ցերեկով անդադար կանում են օդից բոյսերի համար հարկաւոր ածխաթթուատը:

Ուրեմն՝ ինչպէս տեսնում է ընթերցողը բոյսերը կազմում են իրանց ծաղիկները, տերևները և միւս մասերը ոչ թէ ջրից՝ ինչպէս կարծում էր Դիւհամէլը՝ այլ ֆոսֆորից, կալիոնից, ազոտից, ջրից և ածխաթթուատից:

Մնում է ինձ մի քանի խօսք ասել բոյսերի շնչառութեան մասին: «Բոյսերի շնչառութիւն» խօսքերը գուցէ զարմացնեն ընթերցողին:

«Միթէ, իրաւի, բոյսերը շնչառութիւն ունին, կը մտածի նա, և եթէ ունին, ինչպէս է կատարւում նրանց շնչառութիւնը, միթէ նրանք շնչում են ուղիղ այնպէս, ինչպէս կենդանիները»:

Այդ հարցերին գիտնականները դրական պատասխան են տալիս:

«Այո՛, ասում են նրանք, բոյսերը շնչում են ուղիղ այնպէս, ինչպէս կենդանիները»:

Յայտնի բան է, որ էլի տարբերութիւն կալ բոյսերի և կենդանիների շնչառութեան մէջ: Օրինակ՝ բոյսերը չունին կենդանիների նման թոքեր շնչառութեան համար: Բայց միթէ շնչառութեան նպատակը թոքեր ունենալն է: Բազմաթիւ արարածներ միւնոյն նըպատակին հասնելու համար գործ են ածում շատ անգամ բոլորովին տարբեր միջոցներ: Օրինակ՝ մի որևէ օրգանիզմ շարժւում է ոտների օգնութեամբ. միւսը—ոտների և ձեռների. երրորդը՝ չունենալով ոչ ոտներ, ոչ ձեռներ՝ շարժւում է պոչի կամ մի ուրիշ օրգանի օգնութեամբ: Միթէ մենք իրաւունք չունինք ասելու մի կենդանու մասին, թէ շարժւում է միայն այն պատճառով, որ նա չունի ոտներ: Այս դէպքում գլխաւոր նպատակը շարժուելն է, իսկ ոտները, ձեռքերը, պոչերը միայն միջոց են գլխաւոր նպատակին հասնելու համար:

Նոյնը կարելի է ասել և շնչառութեան մասին. թոքերը միայն միջոց են գլխաւոր նպատակին հասնելու համար, ուրիշ ոչինչ:

Իսկ շնչառութեան գլխաւոր նպատակը՝ ինչպէս յայտնի է՝ կայանում է նրանում, որ հեռացնուի մարմնի մէջ հաւաքուած վնասակար ածխաթթուատը և նրա փոխարէն մտցնուի մարմնի մէջ անհրաժեշտ թթուածինը: Թէ մարդիկ և թէ կենդանիները շնչառութեան ժամանակ ծծում են օդից թթուածինը և արտաշնչում ածխաթթուատը: Նոյնը անում են և բոյսերը. գիշեր ու ցերեկ նրանք անդադար ծծում են օդից թթուածին և արտաշնչում ածխաթթուատը^{*)}:

Եթէ վերցնենք մի անօթ և՝ գնելով նրա մէջ մի փոքր կենդանի՝ կողպենք անօթը, մի քանի ժամանակից յետոյ հետագօտութիւնը ցոյց կը տայ, որ անօթի մէջ ածխաթթուատի քանակութիւնը շատացել է, իսկ թթուածինը ընդհակառակը քչացել: Միւնոյնը կը պատահէր, եթէ այդ անօթում կենդանու տեղ գնեինք մի որևէ բոյս և պահէինք մութը տեղ:

^{*)} Այդպիսով բոյսերում միաժամանակ երկու երար հակառակ երեսոյներ են կատարուում: Նրանք ծծում են թթուածին և արտաշնչում ածխաթթուատ - այդ նրանց շնչառումն և կատարուում է գիշեր ու ցերեկի: Դրանեց անկախ ցերեկները կատարուում է հակառակ պրօցեսոր, բոյսերը կլանում են ածխաթթուատ և արտադրում թթուածին: Թէ ցերեկով բայսերը համ կլանում են ածխաթթուատ (անդառուութիւն) համ արտաշնչում (շնչառութիւն), բայց որպէս ետև ածխաթթուատի կլանումը անհամատ աւելի սասանի է կատարուում: Քանի արտաշնչում, ուստի բոյսերը ցերեկով մաքրում են օդը՝ քչացնելով օդում գտնուող ածխաթթուատի քանակութիւնը:

Բոլորին յայտնի է, որ կենդանիները
մեռնում են, երբ նրանց զրկում են օդից:
Միևնունը պատահում է և բոլորի հետ, երբ
նրանց էլ զրկում են օդից:

Հետազոտութիւնները ցոյց տուին, որ բոյ-
սերը չունին մի առանձին օրգան շնչառու-
թան համար, այլ շնչում են ամբողջ մարմ-
նով, տերևների, ճիւղերի և արմատների օդ-
նութեամբ։ Ամեն մի տերև ծծում է օդը,
նոյնը անում է և բոլորի ամեն մի արմատը։

Ուրեմն բոյսերի կանոնաւոր զարգացման
համար բաւական չէ, որ միայն ջուր և հան-
քային նիւթեր լինին արմատների մօտ. ան-
հրաժեշտ է, որ հողի մէջ բաւակա-
նաչափ օդ լինի արմատների շնչա-
ռութեան համար։

II

Հողը։ Ինչից է բաղկացած հողը։ Կաւ, տւաղ,
կիր, հումուս և հանքային սննդական նիւթեր։
Սննդական նիւթերի քանակութիւնը փոխում է։
Զանգան տեսակ հողեր են նրանց յատկութիւնները։
Հողը պէտք է լինի կակուղ և ընդունակ բաւակա-
նաչափ ջուր կլանելու։ Ի՞նչպէս կարելի է ճանաչե-
գանազան տեսակ հողերը։

Բոլորը ըստ մեծի մասին ապրում են
գետնի վրայ, ստանալով վերջինից իրանց

համար հարկաւոր նիւթերը արմատների օդ-
նութեամբ։ Հասարակ երկրագործին էլ յայտ-
նի է, որ հողի յատկութիւնները ահագին
ազդեցութիւն ունին բոլորի վրայ։ Ուրեմն
ամենից առաջ պէտք է ուսումնասիրենք հո-
ղի յատկութիւնները, եթէ միայն ցանկանում
ենք լուրջ կերպով վերաբերուել դէպի երկրա-
գործութիւնը։

Վերցնենք գետնի վերևի շերտից մի փոքր
հող, ածենք մի գլանաձև (պիլինգридический)
ապակեալ անօթի մէջ, և՝ աւելացնելով հողին
ջուր՝ ուժգին թափահարենք անօթը։ Եթէ
դրանից յետոյ նորից վայր դնենք անօթը,
շուտով կը նկատենք, որ բոլոր հողը երկար
ժամանակ չի մնում խառնուած ջրի հետ։ Զու-
րը թափահարելուց յետոյ դեռ մի քանի րո-
պէ չանցած հողը բաժանուած է երկու մասի,
մինը նստում է անօթի յատակին, իսկ միւս
մասը շարունակում է երկար ժամանակ մնալ
խառնուած ջրի հետ։ Այս վերջինը բաղկացած
է կաւից և ընդունակ է երկար ժամանակ լո-
ղալ ջրի մէջ և չը նստել անօթի յատակին,
եթէ մինչև անգամ ջուրը բոլորովին հանդիսա-
լին։

Իսկ հողի այն մասը ստիւդիութիւնը մասնաւթեան
պատճառով չնշանակ անունը եւ անօթի յա-

7/31 1922



տակին՝ կոչւում է աւագ: Այդ երկու նիւթերից—կաւից և աւազից է զլխաւորապէս կազմուած հողը: Բացի դրանից հողի մէջ լինում են միշտ փոքր քանակութեամբ կիր և «հումուս»:

Կիրը, աւազը և կաւը հանրածանօթ նիւթեր են, այդ պատճառով նրանց մասին խօսելու կարիք չը կալ. բայց ի՞նչ բան է «հումուսը»:

Յայտնի է, որ ամենայն տարի հողի հետ խառնուում են բոյսերի և կենդանիների զանազան մասերը. տերևները, չորացած ճիւղերը և արմատները, մեռած կենդանիների մնացորդները. ևայլն:

Ամենքը նոյնպէս գիտեն, որ բոյսերի և կենդանիների մնացորդները չեն մնում անփոփոխ գետնի մէջ. նրանք սկսում են օդի և ջրի ազդեցութեան տակ լուծուել, փթել: Իսկ նրանց գոյնը քանի գնում, այնքան սեանում է:

Այս այդ կիսալուծուած, սեացած նիւթերը կոչւում են «հումուս»: Ինչքան աւելի հումուս լինի հողի մէջ, այնքան վերջինի գոյնը աւելի սև կը լինի: Ուստաստանում ահազին տարածութիւններ կան, ուր հողը շատ հումուս ունենալու պատճառով ստացել է զարմանալի սև գոյն: Այդ հողերը անուան-

ում են „черноземъ“, որ նշանակում է սեահող:

Այդպէս ուրեմն հողը բաղկացած է չորս նիւթերից. կաւից, աւազից, կրից և հումուսից: Բացի դրանից մեզ արդէն յայտնի է, որ ամեն տեսակ հողում լինում են փոքր քանակութեամբ այն հանքային նիւթերը, որոնք կազմում են բոյսերի սնունդը, այսինքն՝ ազդային, Փոսֆորային և կալիոնային նիւթերը:

Հետազոտութիւնները ցոյց տուին, որ սննդական նիւթերի քանակութիւնը հողի մէջ կամ քչանում է, կամ շատանում: Առաջին երեսոյթը, այսինքն սննդական նիւթերի քանալը, ինքն ըստ ինքեան հասկանալի է: ԶԵ որ բոյսերը նրանցով են կերակրուում: Բոյսերի արմատները անդադար ծծում են ջուր, որ իր հետ տանում է այդ նիւթերից: Ուրեմն ուր որ կան բոյսեր, այնտեղ սննդական նիւթերի քանակութիւնը հողի մէջ կը փոքրանայ: Այս պարզ է:

Հիմա տեսնենք, թէ ինչպէս են բացարում սննդական նիւթերի շատանալը հողի մէջ:

Բոյսերը կերակրուելով մեզ ծանօթ հանքային նիւթերով, նրանց օգնութեամբ կազմում են ճիւղեր, արմատներ, տերեւներ...

Այստեղից դժուար չէ եզրակացնել, որ բոյսերի տերեները, արմատները, ճիւղերը պարունակում են իրանց մէջ նոյն հանքային նիւթերը։ Այս բանն ապացուցուած է փորձերով։

Երբ բոյսը մեռնում է, շուտով նա սկսում է լուծուել, փթել և սեանալով դառնում է հումուս, որ իր մէջ պարունակում է այն բոյսը հանքային նիւթերը (ազոտային, ֆոսֆորային, կալիոնային), որոնք առաջ գտնուում էին բոյսերի մէջ։

Սակայն հումուսն էլ չի մնում անփոփոխ, նա շարունակում է ջրի և օդի օգնութեամբ լուծուել։ Երբ լուծուելը վերջանում է, հողի մէջ մնում են հումուսից (ուրեմն և ամբողջ բոյսից) միմիայն սննդական հանքային նիւթերը, որոնք նորից կարող են կերակրել նոր զարգացող բոյսեր։

Այդպիսով այդ նիւթերը անդադար պտույտ են անում. բոյսերը նրանցով կերակրուելով զարգանում են, աճում են, իսկ նրանց (բոյսերի) մեռնելուց և փթելուց յետով, սննդական նիւթերը ազատւում են, որպէս զի նորից կերակրեն նոր բոյսեր։

Ուրեմն բոյսերի մնացորդները (կամ թէ հումուսը)՝ լուծուելով հո-

ղե մէջ՝ հարստացնում են նրան հանքային սննդական նիւթերով։

Նոյն նիւթերի քանակութիւնը շատանում է հողի մէջ մի ուրիշ պատճառով էլ։ Յայտնի է, որ գետնի մէջ կան զանազան քարեր, որոնք այլևայլ պատճառներով փոքր առ փոքր փշրւում են։ Գոյանում է փոշի, որը՝ ինչպէս ցոյց են տալիս քիմիական հետազօտութիւնները՝ բաղկացած է շատ բարդ հանքային նիւթերից։ Ի միջի այլոց այդ քարերի փոշու մէջ կայ ֆոսֆոր, կալիոն, ազոտ...

Զուրը և օդը՝ ներգործելով այդ բարդ նիւթերի վերայ՝ լուծում են նրանց փոքր առ փոքր, իսկ լուծուելուց յետով նրանցից ազատւում են ի միջի այլոց և ազոտային, կալիոնային և ֆոսֆորային նիւթերը։ Այս երեսյթը, որ անուանում է քարերի քարքայումը (выветриваніе горныхъ породъ) անդադար շարունակում է հողի մէջ և քիչ չէ նպաստում սննդական նիւթերի շատանալուն։

Ինչպէս տեսնում ենք զուրը և օդը մեծ գեր են կատարում այս երեսյթներում. օդի և ջրի ազդեցութեան տակ լուծում են հումուսը և բարդ հանքային նիւթերը (քարերը)

և հարստացնում են Հողը սննդական նիւթերով:

Վերոիշեալ դատողութիւններից լետոյ հասկանալի կը լինի, թէ բնչու Հողը պարարտանում է, երբ երկրագործները մի քանի տարի հանգիստ են թողնում, ոչինչ ըլ սերմելով նրա մէջ: Ինչքան աւելի շատ հանգիստ մնայ Հողը, այնքան աւելի շատ հումուս և հանքացն նիւթեր կը լուծուին նրա մէջ, այնքան ուրեմն աւելի կը հարստանայ Հողը սննդական նիւթերով: Հումուսի և քարերի լուծումը յայտնի բան է կատարւում է նոյնպէս այն ժամանակ, երբ Հողում ցանում ենք բոյսեր, սակայն այս գէպքում Հողը չի պարարտանում, որովհետև զարգացող բոյսերը կլանում են նոր գոյացած սննդական նիւթերը:

Եթէ այդ տեսակէտից գիտենք զանագան տեսակ Հողեր, մենք կը նկատենք, որ վերոլիշեալ նիւթերի քանակութիւնը սաստիկ տարբերում է, մի Հողում աւելի շատ լինում է կաւ, միւս տեսակ Հողում—աւազ, երբորդը հարուստ է լինում Հումուսով..,

Դրա համեմատ կայ Հողի չորս գլխաւոր տեսակ, աւազային Հող, որի մէջ շատ աւազ կայ, կաւային, որը հարուստ է կաւով, կրային և Հումուսային, որոնք պարունակում են իրանց մէջ շատ կիր և Հումուս: Բացի գրանից լինում են՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ միջին տեսակ Հողեր, որոնք հարուստ են երկու նիւթով: Օրինակ՝ կայ այնպիսի Հող, որ պարունակում է իր մէջ բաւական շատ Հումուս և կաւ, կամ աւազ ու կաւ:

Ալժմ հարց է առաջանում, թէ այդ զանագան տեսակ Հողէրից որի՞ մէջ աւելի լաւ են զարգանում բոյսերը: Այդ հարցերին ուղղակի պատասխանելլ մի փոքր դժուար է. պէտք է ասեմ, որ Հողի համարեա ամեն մի տեսակը ունի իր լաւ ու վատ կողմերը: Այնպէս որ աւելի լաւ կը լինի նկարագրել ամեն տեսակը առանձին:

Իսկ առաջ պարմանաւորուենք, թէ ո՞րպի-

սի յատկութիւնները պէտք է լաւ յատկութիւններ անուանենք:

Լաւ հողը պէտք է լինի այնքան կակուղ (փուխը, բախլայ), որ ջուրը և օդը հեշտութեամբ կարողանան թափանցել նրա մէջ: Ջուրը հարկաւոր է իբրև սննդական նիւթ, իսկ օդը—արմատների շնչառութեան համար. մենք արդէն գիտենք, որ արմատները կը փշանան առանց օդի:

Բացի դրանից օդը և ջուրը հարկաւոր են և նրա համար, որ լուծեն հողի միջի հումուսը և քարերը, որպէս զի ազատեն նրանցից բոյսերի համար սննդական նիւթեր:

Միւս կողմից հողը պէտք է ունենայ ընդունակութիւն բաւականաչափ ջուր կլանելու (պօցլողածայ): Բացատրեմ թէ ինչում է կայանում այդ յատկութիւնը: Եթէ վերցնենք մի մեծ ձագար (вороонка), լցնենք նրան չոր հողով և թափենք վերջինի վերայ յալտնի քանակութեամբ ջուր, մենք կը տեսնենք, որ ձագարի միւս ծալրով դուրս է գալիս մեր գործածածից անհամեմատ աւելի քիչ ջուր: Նշանակում է, որ հողի միջով անցնող ջրի մի մասը մնում է հողի հետ, վերջինս ընդունակ է միացնել իր հետ որոշ քանակութեամբ ջուր:

Այս յատկութիւնը վերջին աստիճան նշա-

նաւոր է, որովհետեւ նրա շնորհիւ բոյսերը կարողանում են գետնից կանոնաւոր կերպով ջուր ստանալ: Այս ինչպէս: Երբ հողի վրայ շատ ջուր է լինում (օրինակ՝ հողը ջրելու ժամանակ, կամ անձրևից յետոյ), հողը բաւական ջուր է կլանում ու յետոյ երկար ժամանակ քիչ քիչ տալիս է այդ ջուրը բոյսերի արմատներին:

Փորձերը ցոյց են տալիս, որ զանական հողեր միատեսակ չեն վերաբերում ջրին. մի տեսակ հողը շատ է կլանում ջուր, միւսը աւելի քիչ... Հասկանալի բան է, որ բոյսերը աւելի շուտով կարող են չորանալ այն հողում, որ ընդունակ չէ բաւականաչափ ջուր կլանելու և պահելու իր մէջ:

Այս այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, սկսենք նկարագրել կաւալին հողը: Այդ տեսակի հողը բաղկացած չէ միմիայն կաւից. հարիւր ֆունտ կաւալին հողում լինում է մինչև 40 կամ 50 ֆունտ կաւ, մնացածը բաղկացած է լինում աւազից, կրից, հումուսից և ալին: Կաւի մասնիկները լինում են շատ սերտ կապուած միմեանց հետ. վերցնելով մի փոքր կաւալին հող, մենք կարող ենք նրան զանազան ձևեր տալ մատների օգնութեամբ: Այդ տեսակ հողի մասնիկ-

ներն իրար կպած լինելով սաստիկ ամուր, նրանց (մասնիկների) մէջ այնքան քիչ տարածութիւն է մնում, որ ջուրը և օդը մեծ դժուարութեամբ են կարողանում թափանցել հողի մինչև անգամ վերև շերտերը, իսկ ցածր շերտերին հասնելը համարեա անհնարին է լինում:

Այս պատճառով կաւալին հողը այնքան էլ չի նպաստում բոլորի կանոնաւոր զարգանալուն: Մանաւանդ դժուար է կատարում կաւալին հողում արմատների շնչառումը օդի քչութեան պատճառով: Կաւալին հողը հեշտ ջոկում է ուրիշներից նրանով, որ երբ չորանում է, նրա մակերեսովթը շատ տեղ ճեղքում է:

Հասկանալի բան է, որ այդ տեսակ հողում շնչին քանակութեամբ կարող են լուծնել թէ բոլորի մնացորդները և թէ բարդ հանքալին նիւթերը (քարերը): Ուրիշ խօսքերով կաւալին հողը մի քանի տարի ազատ մնալով բուսականութիւնից՝ այնքան էլ չի կարող հարստանալ սննդական նիւթերով:

Բոլորովին հակառակ յատկութիւններ ունի աւագ ալին հողը, որ պարունակում է իր մէջ մինչև 70 տոկոս աւազ: Այսինքն 100 ֆունտ աւազուտ հողում լինում է մօտաւո-

րապէս 60 կամ 70 ֆունտ աւազ, մնացածը բաղկացած է լինում կաւից, հումուսից... Աւազուտ հողին անկարելի է ձեւեր տալ մատներով, որովհետև նա հեշտ փշրւում է: Աւազի մասնիկները ամուր չեն կպած իրար, նըրանց մէջ մնում է բաւական տարածութիւն, այնպէս որ ջուրը և օդը հեշտութեամբ կարողանում են թափանցել հողի մէջ: Ուրեմն աւազուտ հողում արմատների շնչառութիւնը կատարում է հեշտութեամբ, իսկ հումուսը լուծնում է արագ:

Այս բոլորը աւազուտ հողի առաւելութիւններն են կազմում: Սակայն նա էլ իր պակասութիւններն ունի. աւազուտ հողը չի կարողանում իր հետ միացնել (կլանել) բաւականաչափ ջուր, որ հեշտութեամբ անցնելով աւազի միջով, շուտով կորչում է շատ ցածր շերտերում: Դրանով է բացատրում, որ աւազուտ հողը շուտով ցամաքում է և նրավրալի բոլորը աւելի շուտ կարող են չորանալ:

Ալդակառով կաւալին և աւազուտ հողերը կազմում են երկու ծայրակեղութիւններ և երկուսն էլ ունին մեծ պակասութիւններ:

Վերև ես ասեցի, որ լինում են նաև միջին տեսակ հողեր: Հետաքրքրական է, որ կաւը և աւազը միանալով, նրանց երկուսի պակասութիւններն էլ համարեա բոլորովին ոչնչանում են: Այդ պատճառով այն հողը, որ պարունակում է իր մէջ բաւական շատ կաւ և աւազ, անհամեմատ աւելի յաւ է, քան թէ աւազուտ կամ կաւային հողերը: Օրինակ նա կաւային հողից նրանով է լաւ, որ պարունակում է իր մէջ բաւական շատ աւազ, որ՝ փափկացնելով հողը՝ հեշտացնում է օդի և ջրի թափանցելը: Միւս կողմից այդպիսի հողը ըուն աւազուտ հողից էլ լաւ է, որովհետեւ պարունակելով իր մէջ բաւական շատ կաւ՝ նա ընդունակ է աւելի շատ ջուր կլանելու. ուրեմն բոյսերը այդ տեսակ հողում աւելի քիչ պակասութիւն են ունենում ջրի, քան թէ աւազուտ հողում:

Կրինում եմ, որ այն հողերը, որոնք պարունակում են իրանց մէջ բաւական շատ կաւ և աւազ, նպաստում են բոյսերի լաւ զարգանալուն, այդ պատճառով նրանք համարւում են լաւ հողեր:

Սակայն ամենից լաւ հող համարւում է հումուսային հողը (перегнойная почва), որ պարունակում է իր մէջ մօտաւո-

րապէս 15 տոկոս հումուս: Այս ալդ հողի առաւելութիւնները: Լինելով շատ փափուկ՝ նրա միջով հեշտ թափանցում են ջուրը և օդը: Նա պարունակում է իր մէջ շատ հումուս, որ օդի և ջրի առատութեան պատճառով լուծւում է և հարստացնում հողը բոյսերի համար սննդական նիւթերով: Այդ պատճառով հումուսային հողը համարւում է ամենապարաբտ հող: Բացի դրանից այդ տեսակ հողը ունի և այն առաւելութիւնը, որ մեծ քանակութեամբ ջուր է կլանում, ոչ մի հող չի կարող իր մէջ պահել այնքան ջուր, ինչքան պահում է հումուսային հողը:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս կարելի է ճանաչել զանազան տեսակ հողերը:

Արդէն վերոլիշեալ նկարագրութիւնից երեւում է, թէ ինչ միջոցներով կարելի է ճանաչել այս կամ այն տեսակ հողը: Օրինակ՝ երբ վերցնելով մի փոքր մեզ հետաքրքրող հողից տեսնում ենք, որ նրան հեշտ կարելի է տալ զանազան ձեւեր նամ դրութեան մէջ, կամ թէ երբ անձրեւային ջուրը չը կարողանալով թափանցել նրա մէջ, լիներ է կազմում գետնի երեսին—այն ժամանակ մենք կարող ենք ասել, որ ալդ հողը կաւային հող է:

Աւազուտ հողը ունի աւազի տեսք և նրա

Երեսին անձըևից երբէք լիճեր չեն գոյանում,
որովհետեւ ջուրը հեշտութեամբ անցնում է
նրա միջով։ Ուրեմն նոյնպէս դժուար չէ ճա-
նաչել և աւազուա հողը։

Այն դէպքում, երբ արտաքին տեսքով ճա-
նաչել հողը անկարելի է, պէտք է դիմել ու-
րիշ միջոցի։ Հարկաւոր է այդպիսի դէպքում
վերցնել մի փոքր հող, խառնել ջրի հետ, և
թափահարել։ Մենք արդէն գիտենք, որ այդ
ժամանակ աւազը կը թափուի անօթի յա-
տակը, իսկ կաւը կը մնայ խառնուած ջրի
հետ։ Եթէ զգուշութեամբ թափենք ջուրը,
նա իր հետ կը տանի կաւը, իսկ աւազը կը
մնայ անօթի մէջ։ Աւազը կարելի է հաւա-
քել, չորացնել ու կշռել։ Եթէ յալտնի է ըս-
կըզբում վերցրած հողի քանակութիւնը, այն
ժամանակ հողի ընդհանուր կշռից հանելով
աւազի կշռը, կըստանանք կաւի կշռը։

Հումուս և կիր առհասարակ համեմատա-
քար շատ քիչ են լինում, այնպէս որ վերոյի-
շեալ փորձում նրանց կարելի է չունենալ ի
նկատի։ Ուրեմն այս հասարակ միջոցը կարող
է մեզ մօտաւորապէս գաղափար տալ հողի
մէջ գտնուող կաւի ու աւազի քանակութեան
մասին։

Վերև ես ասեցի, որ հողի մէջ առհասա-

րակ կիր քիչ է լինում, այնպէս որ նրան կա-
րելի է չունենալ ի նկատի։ Սակայն պէտք է
աւելացնեմ, որ լինում են դէպքեր, երբ կը ի
քանակութիւնը հողի մէջ հասնում է 20 տո-
կոսի։ Այդպիսի հողերն անուանւում են
կրային հողեր։ Ուրիշ տեսակ հողերից
կրային հողը հեշտ է ջոկւում. եթէ վերցնենք
մի փոքր կրային հողից և ածենք նրա վերայ
քացախ, նա խկոյն կսկսի թշշալ։

Ի՞նչ ասել կուզի, որ այս բոլորը կոպիտ
միջոցներ են. նրանցով կարելի է միմիայն մօ-
տաւորապէս գաղափար կազմել հողերի մասին։
Գիտութեան մէջ բազմաթիւ միջոցներ կան
աւելի ճիշտ կերպով որոշելու հողի մէջ պա-
րունակւող նիւթերի քանակութիւնը, բայց
տարաբախտաբար այդ միջոցները այնքան
նուրբ ու դժուար են, որ մատչելի են միայն
մասնագէտներին։ Ուրեմն անտեղի կը լինէր
այդպիսի միջոցների մասին խօսել այսպիսի
գրքովկում։

III

Հողի հերկումը: Այդ գործողութեան հետևանքները՝ հողի փափկանալը. հումուսի և բարդ հանքային նիւթերի լուծուելը. անպէտք բոյսերի ոչնչանալը: Հերկուած հողը աւելի երկար է պահում խոնաւութիւնը: Իրշապէս պէտք է հերկել զանազան տեսակ հողերը:

Մենք արդէն տեսանք, որ հողի կակութութիւնը աշագին նշանակութիւն ունի բուսականութեան համար: Միւս կողմից մեզ լայտնի է, որ շատ հողեր չունին ալդ ցանկալի յատկութիւնն այն պատճառով, որ նրանց մասնիկները ամուր կպած են իրար:

Բացի դրանից կակուղ հողերն էլ (աւագուտ հողը, հումուսային հողը...) մի քանի ժամանակից յետոյ պնդանում են, այնպէս որ օդը և ջուրը էլ չեն կարողանում հեշտ թափանցել նրանց մէջ: Եթէ մենք չաշխատենք այդ պնդանալու առաջն առնել, այն ժամանակ հողն աւելի ու աւելի անընդունակ կը դառնալ կերակրելու և զարգացնելու բոյսեր:

Սրանով է բացատրւում, որ մարդիկ հին ժամանակներից սկսած ստիպուած են եղել միջոցներ հնարել հողը կակուղացնելու համար:

Այժմ նոյն իսկ գժուար է երեակայել որևէ գեւղական տնտեսութիւն առանց գութանի, իսկ լուսաւորուած երկրներում՝ չը բաւականալով գութաններով՝ ուրիշ գործիքներ էլ են գործ ածում հողը փափկացնելու համար:

Ի դէպ է ասել, որ այնտեղ բաւական չեն համարում տարէնը մի անգամ վարելը, այլ փափկացնելը մի քանի անգամ կրկնում են, որպէս այնտեղ գիտեն, որ առատ բերք ստանալու համար հարկաւոր է հողը կակուղ պահէել: Իսկ մեզ մօտ երկրագործները և այգեգործները տարաբախտաբար գեռ լաւ չեն ըմբռնել վարելու մեծ նշանակութիւնը: Դեռ կան այգեգործներ, որոնք քարոզում են, որ բաւական է հողը երկու երեք տարէնը մի անգամ վարելը, նրանք կասկածում են, որ աւելի յաճախ փափկացնելը օգտաւէտ լինի:

Այդ հայեացքը բոլորովին սխալ է. հողի հերկելը երկրագործութեան ամենագլխաւոր գործողութիւններից մէկն է: Հերկումը՝ եթէ լաւ է կատարուած՝ ունենում է բազմաթիւ լաւ հետեանքներ: Փափկացրած հողում ըուսերի արմատները աւելի հեշտ են տարած-

ւում, նրանք պակասութիւն չեն քաշում ջրի
և օդի, որովհետև կակռւղ հողի մէջ դժուար
չէ վերջիններին թափանցել:

Օդի և ջրի առատութեան պատճառով
փափկացրած հողում սաստկանում են լուծման
երեսովիթները. բոլորի և կենդանիների մնա-
ցորդներն սկսում են արագ կերպով լուծուել,
փթիլ: Քարերի քայքայումը նոյնպէս աւելի
արագ է կատարում փափկացրած հողում:

Դրա հետևանքն այն է լինում, որ բոյ-
սերի սննդական նիւթերի քանակութիւնը շա-
տանում է հողի մէջ: Ուրեմն հողի փափ-
կացնելը (հերկելը) ունենում է մա-
սամբ նոյն հետեանքը, ինչոր արուես-
տական կերպով պարարտացնելը:

Եթէ հերկելը ըլինէր, այն ժամանակ
զանազան օգտաւէտ նիւթեր՝ որպիսիք են
բոլորի մեացորդները, կենդանիների աղբը,
և այլն՝ կը մնալին գետնի մակերեսովիթի վրայ:
Վարելով, հնարաւոր է լինում աւելի համա-
շաւասար կերպով տարածել նոյն նիւթերը
հողի մէջ:

Բացի գրանից հերկումը միջոց է տալիս
մեզ ազատուելու այն բազմաթիւ վայրենի
բոլորից, որոնք խանդարում են օգտաւէտ
բոյսերի կանոնաւոր զարգանալուն:

Փափկացնելը մի մեծ առաւելութիւն էլ
ունի, այն է, որ փափկացրած հողը աւելի եր-
կար ժամանակ է պահում իր մէջ խոնաւու-
թիւնը: Ահա ինչպէս.

Մեզ յախնի է, որ անձրևից յետոյ կամ
հողը ջրելու ժամանակ բաւական ջուր միա-
նում է հողի հետ: Եթէ սկսում են տաք օ-
րերը՝ գետինը կամաց կամաց չորանում է. ա-
ռաջ ցամաքում է գետնի մակերեսովիթը, յետոյ
մի փոքր ցածր. վերջապէս մի քանի ժամա-
նակից յետոյ գետնի ստորին մասերն էլ չո-
րանում են: Ուրեմն՝ թէե հողը ընդունակ է
կլանել բաւական շատ ջուր, բայց միշտ պա-
հել նրան իր հետ չի կարող. արեգակի տա-
քութեան ազդեցութեան տակ ջուրը գոլոր-
շիանում է ու անհետանում:

Այժմ հարց է առաջանում, թէ ո՞րպիսի
հողից աւելի շուտ կը կորչի ջուրը (խոնաւու-
թիւնը)՝ կակնեղ, թէ պինդ հողից: Ուրեշ
խօսքերով ցանկալի է իմանալ, թէ ո՞ր
հողն է աւելի երկար ժամանակ պահում իր
մէջ ջուրը միեւնոյն պայմաններում:

Առաջ այնպէս էին կարծում, թէ պնդա-
ցած հողը աւելի երկար ժամանակ է պահում
խոնաւութիւնը, քան թէ կակուղը: Այժմ էլ
գեռ երկրագործներից շատերը ալդպէս են դա-

տում: Բայց գիտնականները՝ ուսումնասիրելով
այս երևոյթները, իմացան, որ ընդհակառակը
փափկացրած հողում նամութիւնը աւելի եր-
կար ժամանակ է մնում քան թէ պնդացած
հողում: Այս տարօրինակ երևոյթը բացատր-
ում է հետևեալ կերպով:


Գիտութիւնից յայտնի է, որ եթէ վերց-
նենք մի ջրով լիքը անօթ և ջրի մէջ ընկըդ-
մենք մի նեղ ապակու խողովակ, այս վերջի-
նում ջուրը աւելի բարձր կը կանգնի, քան
թէ անօթում: Ինչքան աւելի նեղ խողովակ
ընկըմենք ջրի մէջ, այնքան աւելի շատ կը
բարձրանայ ջուրը խողովակումք:

Հետևեալ նկարը ցոյց է տալիս, թէ ինչ-
պէս է բարձրանում ջուրը խողովակներում
համաձայն այդ օրէնքի:

Այս այս խողովակներին նմանեցնում են
այն տարածութիւնները, որոնք մնում են հո-
ղի մասնիկների մէջ: Պնդացած հողում մաս-
նիկները շատ մօտիկ են գտնուում իրարից,
նրանց մէջ մնում է նեղ տարածութիւն, որը
նմանում է նեղ խողովակին, իսկ փափկաց-
րած հողում մասնիկների մէջ լինում են աւե-
լի լայն տարածութիւններ, որոնք նման են
լայն խողովակին:

Այդ՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ դետնի

խողովակները՝ սկսուելով հողի ստորին շերտե-
րից, ուր հաւաքուած է լինում շատ ջուր,
բարձրանում են մինչև գետնի մակերևոյթը:



Պինդ հողում, որի մէջի խողովակները նեղ
են, ջուրը ստորին մասերից աւելի շատ է
բարձրանում դէպի մակերևոյթը, ուր արեգա-
կի տաքութեան ազդեցութեան տակ գոլոր-
շիանում է ու անհետանում:

Փափուկ հողը՝ ընդհակառակը՝ ունենալով
իր մասնիկների մէջ լայն տարածութիւններ
(խողովակներ), ջուրը այդպիսի հողում ստո-
րին շերտերից չի կարողանում շատ բարձրա-
նալ:

Աւրեմն միւնոյն պալմաններում
պինդ հողը աւելի շուտ է կորցնում
իր ջուրը, աւելի շուտ է ցամաքում,
քան թէ փափկացը ածը:

Աչա ինչպիսի բազմաժիւ հետևանքներ է
ունենում հողի հերկելը: Թէ բաւական թանգ
է նստում հերկելը, բայց ծախսած փողը կո-
րած չէ, որովհետև հողի բերքը շատանում
է փափկացնելուց յետոյ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ չե-
կարելի բազմատեսակ հողերը վարել միւնոյն
կերպով: Այն հողերը, որոնք առհասարակ չեն
լինում շատ պինդ, ինչպէս օրինակ՝ աւազուտ
գետինը, կարելի է թոյլ կերպով հերկել: Կա-
ւային հողը ընդհակառակը հարկաւոր է խոր
և սաստկապէս վարել, որպէս զի կարելի լինի
բաւականացափ կակուղացնել նրան:

IV.

Հողի պարարտացնելու նպատակը: Պարարտաց-
նող նիւթերի բաժանումը, լիակատար և կիսատ
արարարտացնող նիւթերի կենդանիների աղբը: Մարդ-
կային աղբը: Թուչունների աղբը: Գուանօ: Կոմպոստ
և նրա պատրաստելը: Ֆուֆորային նիւթեր, ոսկոր-
ներ և ֆուֆորիտներ. նրանց գործածելը: Սուպեր-
ֆուֆատ: Մոլսիր:

Նախընթաց զընլցներից մենք իմացանք,
որ հողը բաղկացած է գլխաւորապէս չորս
նիւթերից. կաւից, աւագից, հումուսից և կրից,
որոնց հետ փոքր քանակութեամբ լինում են
ազոտալին, ֆուֆորային և կալիոնալին նիւ-
թեր:

Այժմ տեսնենք, թէ ինչ կը պատահի,
եթէ միւնոյն կտոր հողում ամեն տարի սեր-
մենք ցորեն, գարի կամ մի ուրիշ բոյս: Ցա-
նած բոլուերը կսկսեն զարգանալ՝ ստանալով
հողից իրանց համար հարկաւոր սննդական

նիւթերը: Այդ պատճառով նոյն նիւթերի քանակութիւնը հողի մէջ կը քչանալ:

Երբ բոլոսերը բոլորովին զարգանում են, մենք հաւաքում ենք նրանց պտուղները և զանազան մասերը (հատիկները, յարդը...) և հեռացնում գետնից, տանելով նրանց հետ և այն հանքալին նիւթերը, որոնք գտնւում են նրանց մէջ*):

Հասկանալի բան է, որ եթէ ամեն տարի շարունակենք սերմել միւսնոյն հողում, դրա հետևանքն այն կը լինի, որ հողի մէջ գըտնուող ազոտալին, կալիոնալին և ֆոսֆորալին նիւթերի քանակութիւնը կսկսի փոքր առ փոքր քչանալ և մինչեւ անգամ կը գալ ժամանակ, երբ այդ նիւթերից հողում այնքան քիչ մնալ, որ բոլոսերը էլ չեն կարողանալ կարգին զարգանալ: Այդ ժամանակ հողի բերքը լինում է սաստիկ աղքատ՝ չը կարողանալով շատ անգամ նոյն իսկ ծախսերը դուրս բերել: Այդպիսի հողի մասին երկրագործները ասում են, որ նա ուժից ընկել է, յոդ նել է: Փորձերը ցոյց են տալիս, որ ամենա-

*) Քեմիական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ հասկիլները, յարդը և առհասարակ բոյսերի պտուղները կամ զանազան մասերը յիշուել պարունակում են իրանց մէջ աղոտ, ֆոսֆոր, կալիոն...

հարուստ ու ամենապարարտ հողերն էլ վերջապէս «ուժից ընկնում են», եթէ նրանցում ամեն տարի շարունակ ցանենք բոլոսեր:

Այդպիսի դէպքերում երկրագործները առհասարակ դադարում են ցանել մի քանի տարի լոգնած հողում, որպէս զի նա կարողանալ «հանգստանալ»: Ընթերցողին անշուշտ լայտնի է, թէ ինչ է նշանակում հողի հանգստանալը: Երբ մի քանի ժամանակ դադարում են ցանել, հողի մէջի հումուսը և բարդ հանքալին նիւթերը (քարերը) լուծուելով, նորից հարստացնում են հողը սննդական նիւթերով:

Ուրեմն այն դէպքում, երբ հողը բոլորովին ուժից ընկել է, կարելի է դիմել այս միջոցին, այսինքն կարելի է նրան ազատ թողնել բուսականութիւնից մի քանի ժամանակ:

Սակայն հարկաւոր է աւելացնել, որ այդ միջոցը ունի շատ նշանաւոր պակասութիւն. այդ միջոցին դիմելով, երկրագործները ստիպւած են լինում երկար սպասել մինչև որ հողը կունենալ բաւականաչափ սննդական նիւթեր, ուրեմն այս միջոցի շնորհիւ մի կամ մի քանի տարուայ եկամուտը կորչում է:

Այդ պատճառով յաճախ դիմում են մի ուրիշ միջոցի՝ հողի պարարտացնելուն: Պա-

բարտացնելու նպատակն է՝ յետ դարձնել հոգին այն, ինչ որ բոյսերը խլել են նրանից, այսինքն կալիօնային, ֆսսֆորային և ազոտային նիւթեր:

Դրանովէ բացատրւում, որ իբրև պարարտացնող նիւթեր գործ են ածւում այնպիսիները, որոնց մէջ կայ ազոտ, ֆոսֆոր, կալիոն... Կենդանիների աղբը, մարդկանց և թռչունների աղբը յիրաւի պարունակում են իրանց մէջ վերև թռւած սննդական նիւթերը: Ինչքան շատ լինի վերջիններից պարարտացնող նիւթում, այնքան նա աւելի բարձր է գնահատում:

Պարարտացնող նիւթեր շատ կան, բայց ամենից տարածուածը կենդանիների աղբն է: Նրա մէջ կան բոլոր գլխաւոր սննդական նիւթերը՝ ազոտը, կալիոնը և ֆոսֆորը: Այն պարարտացնող նիւթերը, որոնք կենդանիների աղբի նման պարունակում են իրանց մէջ բոլոր գլխաւոր սննդական նիւթերը, անուանուում են լիակատար պարարտացնող նիւթեր. (ոլոնիայ յudoブレնիա), օրինակ՝ մարդկային աղբը:

Բացի գրանից կան և կիսատ պարտացնող նիւթեր, որոնց մէջ կայ մէկ կամ

երկու սննդական նիւթեր, օրինակ ոսկորները, որոնք պարունակում են իրանց մէջ կիր և ֆոսֆոր: Թէև ոսկորների մէջ լինում է և ազոտ, սակայն նրա քանակութիւնը շատ չնշին է: Աղբորակն էլ (սելիտրա) կիսատ պարարտացնող նիւթ է, որովհետեւ իր մէջ պարունակում է միայն կալիոն և ազոտ:

Հասկանալի բան է, որ մի որևէ կիսատ պարարտացնող նիւթ չէ կարող միայն ակբաւականացնել բոլոր կարիքները, որովհետեւ չունի իր մէջ բոլոր կարևոր սննդական նիւթերը: Կիսատ պարարտացնող նիւթերը ծառայում են միայն իբրև օժանդակիչ նիւթեր լիակատար պարարտացնող նիւթերի հետ:

Այժմ ծանօթանանք գլխաւոր պարարտացնող նիւթերի հետ: Սկսենք կենդանիների աղբից: Այս վերջինը՝ ինչպէս վերև նկատեցի ամենատարածուած պարարտացնող նիւթն է: Նրա տարածուած լինելը բացատրւում է նախնրանով, որ շատ հէշտ է նրա ճարելը, երկրորդ՝ որովհետեւ պարունակում է իր մէջ մոլոր գլխաւոր սննդական նիւթերը:

Իսկ 1000 ֆունտ կովի աղբը պարունակում է միմիայն 4 ֆ. ազոտ և 1 ֆ. ֆոսֆորային նիւթ*):

Ինչպէս տեսնում է ընթերցողը, ձիու աղբը Յ անդամ աւելի շատ ֆոսֆորային նիւթունի, քան թէ կովինը. ազոտի քանակութիւնը նոյնպէս աւելի մեծ է առաջինում:

Պէտք է աւելացնեմ, որ կենդանիների պինդ աղբը տարբերում է իր բաղադրութեամբ մէզից. վերջինը աւելի հարուստ է ազոտով և կալիօնով, իսկ պինդ մասը—ֆոսֆորով: Այդ պատճառով կենդանիների աղբը (որը խառնուրդ է պինդ մասի և մէզի) այն ժամանակ է լաւ լինում, երբ զգուշութեամբ հաւաքում ու խառնում են նրա երկու մասերը, այսինքն մէզն ու պինդ աղբը:

Իսկ եթէ անհոգութեան պատճառով մէկ կամ միւս մասից բաւական կորչում է, աղբի առաւելութիւններն էլ պակասում են:

Առհասարակ պէտք է ասեմ, որ մեծ նշանակութիւն ունի աղբի պահպանելը: Մեր կողմերում համարեա ոչինչ ուշադրութիւն չեն դարձնում այդ բանի վրայ. այս պատ-

*) Проф. Густавсонъ,— двадцать лекций агрономической химии, § 18.

Դժուար չէ հասկանալ, թէ ինչու կենդանիների աղբը այդպէս հարուստ է սննդական նիւթերով: Չէ որ նա ընտանի կենդանիների կերակուրի մնացորդն է, իսկ այդ կենդանիների կերակուրը կազմում են ըստ մեծի մասին բոլուրը: Ուրեմն աղբը՝ բոլուրից առաջանալով՝ բնականապէս պարունակում է իր մէջ նրանցից ստացած կոլիօնը, ֆոսֆորը, ազոտը...

Ցալտնի է, որ ընտանի կենդանիներին կերակրում են զանազան կերպ. մի տեսակ կենդանու տալիս են խոտ, միւսին—խոտ ու դարման, երրորդին բացի դրանցից—գարի և ալյնդրա հետևանքն այն է լինում, որ ընտանի կենդանիների աղբը տարբեր է լինում. այն կենդանիները, որոնք ստանում են սննդական նիւթերով հարուստ կերակուր (օրինակ գարի) տալիս են աւելի լաւ աղբ, քան թէ միւսները: Զիաներին աւելի լաւ են կերակրում, քան թէ՝ օրինակ՝ կովերին, այդ պատճառով առաջինների աղբը աւելի հարուստ է սննդական նիւթերով: Այդ պարզ երևում է հետևեալ թուերից:

1000 ֆունտ ձիու աղբը (առանց մէզի) պարունակում է իր մէջ 5 ֆունտ ազոտ և 3 ֆունտ ֆոսֆորային նիւթ:

ճառով աղբը սաստիկ փշանում է և չի տալիս
հողին այն օգուտը, ինչ որ կարող էր տալ:

Դիւղացիները պահում են աղբը կամ կեն-
դանիների ոտների տակ, կամ թէ հաւաքում
են մէկ տեղ: Թողնելով աղբը կենդանիների
ոտների տակ, ըստ մեծի մասին չեն հոգում,
որ մի կերպ պահեն աղբի հեղուկային մասը,
որ թափանցելով գոմի յատակի մէջ՝ կորչում
է, տանելով իր հետ շատ թանգագին նիւթեր:

Որպէս զի այդ չը պատահի, հարկաւոր է
կենդանիների ոտների տակ տարածել բաւա-
կան յարդ, այն ժամանակ հեղուկը կը մնայ-
յարդի մէջ: Այս միջոցը երկու լաւ կողմ ունի.
առաջինը՝ ինչպէս ասեցի՝ հեղուկը չի կորչել,
այլ կը մնայ յարդի մէջ, երկրորդը՝ յարդն
ինքը կը փթի և կը դառնայ աղբ: Յարդի
տեղ կարելի է գործ ածել բոլորի չորացած
տերեներ, կամ նոյն իսկ փափուկ հող:

Այն գէպում՝ երբ ցանկանում են աղբը
հաւաքել և պահէլ մէջ տեղ, հարկաւոր է
աղբի կոյտը կանոնաւոր կերպով կազմել. հար-
կաւոր է աղբի շերտերը այնպէս դարսել մէկը
միւսի վրայ, որ կոյտը ստորին մասերում տ-
ելի լայն ու երկար լինի, քան թէ վերևում:
Կոյտի բարձրութիւնը պէտք է լինի մօտաւո-
րապէս $2\frac{1}{2}$ արշին: Այդպէս պատրաստելուց

յետոյ հարկաւոր է կոյտը ամեն կողմից լաւ
ծածկել հողով: Բանը նրանումն է, որ աղբի
ազոտալին նիւթերը ընդունակ են գազ դառ-
նալու: Երբ կոյտը չեն ծածկում հողով, այն
ժամանակ ազոտալին գազերը դուրս են թըռ-
չում կոյտից և այդպիսով ազոտի քանակու-
թիւնը աղբի մէջ պակասում է: Իսկ հողը
կարողանում է գրա առաջն առնել՝ ընդունակ
լինելով կլանել կոյտից դուրս եկող գազերը:

Այժմ տեսնենք, թէ երբ է հարկաւոր
գործ ածել աղբը: Առհասարակ լաւ հետեանք
չի ունենում, երբ հողը պարարացնում են
բոլորովին թարմ աղբով: Գործ ածելուց առաջ
հարկաւոր է աղբը պահել կոյտերում մի քա-
նի ամիս: Այդ ժամանակի ընթացքում աղբի
մէջ կատարում են շատ նշանաւոր փոփո-
խութիւններ, որոնք մեզ հասկանալի կը դառ-
նան, երբ մտաբերենք, որ աղբը գոյանում է
կենդանիների կերակուրից՝ այսինքն բոլորից:
Իսկ բոլուրի մնացորդներն այն ժամանակ են
կարողանում պարարացնել հողը, երբ լուծ-
ում են և երբ նրանցից ազատում
են մննդական նիւթերը: Ուրեմն կենդա-
նիների աղբն էլ այն ժամանակ կարող
է օգուտ տալ, երբ կը լուծուի, և երբ կազա-

տի իւր մէջ պարունակող սննդական նիւթերը:

Այս այս նշանաւոր փոփոխութիւնը (այսինքն լուծումն) է կատարում, երբ աղբը պահում են կոյտերում: Աղբը լուծուելով, սաստիկ տաքանում է: Աղբի լուծուելու համար էլ անհրաժեշտ է ջուր և օդ. այդ պատճառով հարկաւոր է ժամանակ առ ժամանակ ածել կոյտի վրայ ջուր կամ մէզ, որպէս զի կոյտի մէջ պահպանուի անընդհատ նամութիւն:

Երբ աղբի գոյնը բաւական սեանում է, այդ ցոյց է տալիս, որ աղբը կիսով չափ լուծուել է: այդ ժամանակ հարկաւոր է նրան գործ ածել: Այդպիսով աշխատում են այնպէս անել, որ լուծումը վերջանալ գետնի մէջ, որպէս զի լուծուելուց առաջացած ջերմութիւնը մի փոքր տաքացնի հողը:

Աւելորդ չի լինի նկատել, որ ձիու աղբը աւելի շուտ է լուծում, ուրեմն և աւելի շուտ է պարարտացնում հողը, քան թէ կովինը: Եթէ միւս կողմից մտաբերենք, որ ձիու աղբը աւելի հարուստ է սննդական նիւթերով քան կովինը, այն ժամանակ կը գանք այն եղբակացութեանը, որ ձիաների աղբը անհամեմատ աւելի օգտաւէտ է, քան թէ կովերի

աղբը: Մի պակասութիւն ունի ձիաների աղբը. նա՝ ինչպէս ասում են՝ սաստիկ ցամաքեցնում է հողը: Այդ նրանից է առաջանում, որ ձիաների աղբը ագահութեամբ կլանում է հողի մէջ գտնուող ջուրը, ուստի և անկարելի է նրան գործ ածել այն գէպքերում, երբ առանց այն էլ հողը ջրի և նամութեան պակասութիւն է քաշում:

Մարդկային աղբը՝ ինչպէս պարարտացնող նիւթ՝ աւելի բարձր է համարւում, քան կենդանիների աղբը. և այդ հասկանալի է, որովհետև մարդկանց կերակուրը անհամեմատ աւելի հարուստ է ֆոսֆորով և աղոտով, քան կենդանիների կերակուրը: Նետազօտութիւնները ցոյց են տալիս, որ 1000 ֆունտ մարդկային աղբի մէջ գտնուում են. 8 ֆ. աղոտ և 3 ֆ. ֆոսֆոր:

Մինչդեռ կենդանիների աղբը 1000 ֆունտում պարունակում է միայն 5 ֆ. աղոտ և $2\frac{1}{2}$ ֆ. ֆոսֆոր:

Զը նայած որ մարդկային աղբը պարունակում է իր մէջ շատ սննդական նիւթեր, երկրագործները գեռ չեն աշխատում օգտուել այդ թանդագին նիւթով. և այս ցաւալի է, որովհետև մարդկային աղբը ընդունակ է աշագին օգուտներ տալ երկրագործին. Խօսքիս ա-

պացուց կարելի է բերել չինացիներին, որոնք
մեծ օգուտներ են ստանում՝ պարարտացնելով
իրանց դաշտերը մարդկային աղբով:

Այժմ Եւրոպայում սկսել են շատ տեղ պա-
րարտացնել հողերը մարդկային աղբով, որով-
հետև Եւրոպացիք համոզուել են, որ արժէ
գործ ածել այդ նիւթը: Ուստաստանում էլ
մարդկային աղբի գործածելը փոքր առ փոքր
տարածւում է:

Մարդկային աղբով արտասահմանում յա-
ճախ օգտառում են այսպէս. մի քանի բարե-
կարգուած քաղաքներում շինուած են ստորեր-
կրեալ խորվակներ, որոնց միջոցով աղբը ամ-
բողջ քաղաքից հաւաքւում է մի տեղ, քաղա-
քից գուրս, ուր խառնում է որոշ քանակու-
թեամբ ջրի հետ: Ահա այդ հեղուկով ոռո-
գում են քաղաքների շրջակալքում դտնուղ
գետինը: Այդ հանգամանքի շնորհիւ այժմ շատ
տեղ, ուր առաջ ոչինչ չէր բուսնում, շքեղ
տգարակներ են կազմուել:

Այս միջոցը բարձր է գնահատուում նաև
առողջապահութեան տեսակէտից, որովհետեւ
նրա շնորհիւ կեղտոտութիւնները շուտով հե-
ռանում են խողովակներով քաղաքից և չեն
ապահուած օդը գարշահոտութեամբ:

Մի քանի տեղերում մարդկային աղբը չեն

խառնում ջրի հետ, այլ ընդհակառակը նրան
բոլորովին չորացնում են և գործ են ածում
փոշիացրած գրութեան մէջ:

Թուչունների աղբը նոյնպէս գեղեցիկ
պարարտացնող նիւթ է, նա շատ հարուստ է
ֆոսֆորով և ազոտով և նրա գործածելը հիա-
նալի հետևանքներ է ունենում: Միայն նրան
հարկաւոր է գգուշութեամբ գործածել, եթէ
ոչ կարող ենք օգուտի տեղ վնաս ստանալ:
Այս վերջին հետևանքը տեղի է ունենում այն
ժամանակ, երբ հողը պարարտացնելու համար
գործ են ածում չափազանց շատ աղբ (թըռ-
չունների):

Այդ գէպքում բոյսերը «այրուում» են, ինչ-
պէս ասում են երկրագործները: «Այրուելը»
հետևեալ կերպով է բացատրուում: Բանը նրա-
նում է, որ թռչունների աղբը անհամեմատ
աւելի հարուստ է սննդական նիւթերով, քան
թէ միւս ընտանի կենդանիների աղբը: Երբ
հողը պարարտացնուում է թռչունների շատ
աղբով, այն ժամանակ միանուագ հողի մէջ
մտցնուում են չափազանց շատ սննդական նիւ-
թեր և այդ հանգամանքը վատ է ազդում
բոյսերի վրայ գուցէ հենց նոյն պատճառով,
որով չափազանց շատ կերակուրը վնտսում է
կենդանիներին:

Ուրեմն թուչունների աղբը պէտք է փոքր քանակութեամբ գործածել, որպէս զի նա օգուտ բերի: Մինչդեռ կենդանիների աղբից հարկաւոր է մօտաւորապէս 2000 պուդ մի գեսեատինի համար, նոյն կտոր հողի համար բաւական է գործածել 70 պուդ թուչունների աղբ: Այդ թուերը ցոյց են տալիս, որ թուչունների աղբը անհամեմատ աւելի ուժեղ պարարտացնող նիւթ է, քան թէ ձիաների կամ կովերի աղբը:

Թուչունների աղբը հարկաւոր է գործածելուց առաջ չորացնել, փոշի գարձնել ու յետոյ հաւասարապէս տարածել հողի վրայ: Կարելի է նոյնպէս փոշիացրած աղբը խառնել ուրոշ քանակութեամբ չոր հողի հետ, այնպէս խառնել, որ երկուսից գոյանայ բոլորովին միատեսակ նիւթ և յետոյ այդ խառնուրդը հաւասարապէս տարածել հողի վրայ:

Կայ մի տեսակ թուչունների աղբ, որ պարունակելով իր մէջ մեծ քանակութեամբ ֆոսֆոր և ազոտ՝ ծախւում է Եւրոպայում շատ բարձր գնով: Գուշանօն՝ ալգովիս է անուանւում այդ հիանալի պարարտացնող նիւթը՝ գոյացել է հարաւային Ամերիկայում, այնտեղ ապրող բազմաթիւ թուչունների աղբից և գիակներից (ոսկորներից): Դարերի ընթաց-

քում այդ նիւթից կազմուել են ամբողջ շերտեր: Ամենայն տարի Ամերիկայում բերում են գուտանո Եւրոպա վաճառելու համար:

Մեծ գործնական նշանակութիւն ունի մի ուրիշ պարարտացնող նիւթ—այն է կոմպոստ ասուած նիւթը: Ահա թէ ինչպէս են պատրաստում կոմպոստը: Առաջ հաւաքում են ջոկ ջոկ այն բազմաթիւ նիւթերը, որոնք անպակաս են ամեն մի տնտեսութեան մէջ. թուչունների փետուրները, անպէտք մսի կրտուները, ոսկորները, բոլսերի տերեւները, մոխիրը, մարդկանց աղբը և այն:

Մեզ մօտ այդ նիւթերը առհասարակ թափւում են մէկ տեղ և փթելով ապականում են օդը գտրաշնոտութեամբ, այնպէս որ տանտէրերը աշխատում են նրանցից մի կերպ ազատուել: Մինչդեռ հասկացող երկրագործները՝ դէն գցելու փոխարէն՝ նրանցից պատրաստում են լաւ ալբարտացնող նիւթ:

Վերոյիշեալ նիւթերը առանձին առանձին հաւաքելուց յետոյ սկսում են կազմել կոմպոստը հետևեալ կարգով: Ընտրելով մի յարմար տեղ՝ տներից բաւական հեռու՝ գետնի վրայ առաջ թափում են չոր հող և հաւասարապէս տարածում, յետոյ հողի վրայ ածում են մոխիր կամ կիր և նոյնպէս հաւասարապէս

տարածում, իսկ մոխերը ծածկելով հողով, ամբողջ կոյար ոռոգում են ջրով կամ մէզով: Յետոյ կոյտի վրայ գնում են մի շերտ բոյսերի տերեւներից կամ կենդանիների աղբից, ծածկում են այդ շերտը հողով և նորից ոռոգում: Այդպէս շարունակում են դարսել շերտերով զանազան նիւթեր և ծածկել ամեն շերտ հողով, մինչև որ ամբողջ կոյտի բարձրութիւնը կը հասնի 2 արշինի: Ամբողջ կոյտը վերևից մինչև ներքեւ հարկաւոր է լաւ ծածկել հողով:

Այդպէս պատրաստած կոյտը պահում են մօտաւորապէս մի կամ մէկ ու կէս տարի, այդ ժամանակի ընթացքում նրա մէջ գանուող նիւթերը սաստիկ փոփոխուում են. օդի և խոնաւութեան ազդեցութեան տակ նրանք լուծում են և ազատում իրանց մէջ գտնուող ազոտը, կալիոնը և ֆոսֆորը: Կոյտը կազմելիս շատ հող են գործ ածում, որպէս զի լուծուելու ժամանակ գոյացող ազոտային գազերը դուրս չը գան կորչեն, այլ մնան հողի մէջ:

Կոյտը (կոմպոստը) այն ժամանակ կարելի է պատրաստ համարել, երբ նրա մէջ գըտնուող բազմաթիւ նիւթերը՝ լուծուելով կստանան միակերպ տեսք: Այդ ժամանակ սկսում են նրանց գործածել: Կոմպոստային նիւթերով

պարարտացնելը կատարւում է այնպէս, ինչպէս և կենդանիների աղբով պարարտացնելը: Բաղմաթիւ փորձերը ցոյց են տալիս, որ կոմպոստային նիւթերը շատ լաւ են ներգործում հողի վրայ և միշտ շատացնում են վերջինի բերքը:

Մինչև այժմ ես խօսում էի լիակատար պարացտացնող նիւթերի մասին, աւելորդ չի լինիլ մի քանի խօսք էլ ասել կիսատ պարտացնող նիւթերի վերաբերմամբ:

Վերև ես նկատեցի, որ կիսատ պարտացնող նիւթերը չեն կարող լրացնել բոյսերի բոլոր կարեխները, որովհետև իրանց մէջ պարունակում են միայն մէկ կամ երկու սննդական նիւթ: Սակայն յաճախ այդ նիւթերն էլ խոչոր ծառայութիւններ են մատուցանում երկրագործութեանը: Աչա ինչպէս:

Մենք գիտենք, որ կենդանիների աղբի մէջ կալ ֆոսֆոր, բայց վերջինի քանակութիւնը այնքան էլ մեծ չէ: Եթէ կենդանիների աղբով պարարտացնելուց յետոյ հողում ցանենք այնպիսի բոյսեր, որոնք բաւականանում են քիչ ֆոսֆորով, այն ժամանակ բոյսերը կը կարո-

դանան լաւ զարգանալ։ Սակայն կան և այնպիսի բոյսեր, որոնք իրանց զարգացման համար պահանջում են աւելի շատ ֆոսֆոր, քան կարող է տալ նրանց կենդանիների աղբը, այդ պատճառով նրանք չեն կարողանում բաւարար կերպով զարգանալ այն հողում, որ պարարտացրած է միմիայն կենդանիների աղբով։

Այս այսպիսի դէպքերում վերին աստիճան օգասաւէտ է լինում, երբ կենդանիների աղբի հետ՝ գործածելուց առաջ՝ խառնում են այնպիսի նիւթ, որ հարուստ է ֆոսֆորով։

Նշանաւոր կիսատ պարարտացնող նիւթերից մէկն է ոսկորը, որ՝ ինչպէս վերև ասեցի՝ բաղկացած է գլխաւորապէս կրից և ֆոսֆորից։ Ոսկորները՝ պարունակելով իրանց մէջ բաւական շատ ֆոսֆոր, համարում են գեղեցիկ օժանդակիչ ֆոսֆորալին նիւթ, և լաւ կը լինէր, եթէ գիւղատնտեսները դարձնէին նրանց վրայ իրանց ուշադրութիւնը։ Ժամանակ է, որ մեզ մօտ էլ սկսեն գործածել այդ օգտաւէտ նիւթը։

Ոսկորները այն դէպքում են կարողանում լաւ ներգործել հողի վրայ, երբ նրանց առաջ մանրացնում են, փոշի դարձնում ու լետոյ գործածում։ Բայց թարմ ոսկորները փոշի դարձնել բաւական դժուար է. աւելի լաւ է

առաջ ոսկորները այլրել կամ եփ տալ ջրում մի քանի ժամանակ։ Այլրելուց կամ ջրի մէջ եփ տալուց լետոյ ոսկորները հեշտ փշրւում են, այդ ժամանակ նրանց փոշի են դարձնում և լետոյ գործածում։ Օրինակ խառնում են այդ փոշին կենդանիների աղբի հետ և աղբը տարածում հողի վրա։ Մի գեսեատին հողի համար բաւական է գործածել 30 պուդ ոսկորալին փոշի։

Վերջին ժամանակները Ռուսաստանում ըսկըսել են գործածել ֆոսֆորիտներ ասւած քարերը, որոնք պարունակում են իրանց մէջ շատ ֆոսֆոր։ Ֆոսֆորիտները մեծ քանակութեամբ տարածուած են Ռուսաստանի մի քանի նահանգներում։ Նրանց հաւաքում են, մանրացնում են, փոշի դարձնում ու լետոյ գործ են ածում այնպէս, ինչպէս ոսկորները։

Հաճախ ոսկորների փոշին գործածելուց առաջ ենթարկում են քիմիական փոփոխութեան, խառնելով նրան ծծմբաթթուատի հետ։ Ոսկորները (նոյնպէս և ֆոսֆորիտները) ծծմբաթթուատի հետ կազմում են նոր բաղդրութիւն, որ կոչւում է սուպերֆոսֆատ։ Փողձերը ցուց են տալիս, որ սուպերֆոսֆատը աւելի լաւ է ներգործում բոյսերի վրայ, քան թէ հասարակ ոսկորալին կամ ֆոսֆորիտալին

Գործին: Ա. Փառս միայն, որ սուպերֆոսֆատի պատրաստելը բաւական թանկ է նստում:

Գրքոյկս վերջացնելուց առաջ կը ցանկա-
նալի ընթերցողի ուշադրութիւնը դարձնել մի
նիւթի վրայ էլ, խօսքս մոխիրի մասին է.
Գոյանալով բոլորից մցխիրը պարունակում է
իր մէջ շատ սննդական նիւթեր, մանաւանդ
հարուստ է նա կալիօնով, այդ պատճառով
մոխիրը լաճախ գործ է ածւուէ՝ իբրև օժան-
դակիչ կալիօնալին նիւթ՝ կենդանիների աղբի
հետ միասին:

Տառ սրբության
կամաց արժեքը
ապահով է առ առ
առ առ առ առ առ



4944

2n

այս մեջ պար ու գույքի առաջ
առաջակա վահան ժամանակ է առաջ ա.

Եղանակ մաքաղը առաջ առ զան
ան անելեցը և զան տես զարդի մի
մի լուս է բայց օճախ է առաջ առաջ ա
պահանջ բարդի մաքաղ պահանջ է
ի առ զան անելեց է առ առաջ առ
պահանջ առ առ պահանջ առ պահանջ
պահանջ պահ է առ առ պահ առ պահ
պահ պահանջ պահ է առ առ պահ առ պահ

2013

<<Ազգային գրադարան



NL0069278

